



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 03 >> Օգոստոսի 2011թ.
ք. Արմավիր

N 60

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011թ. հուլիսի 29-ի N259 որոշումը, <<Ակնաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ա. Թովմասյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Ակնաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ա. Թովմասյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հնգօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Լ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի 2011 թվականի օգոստոսի <<23>>-ի
N 80 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թովմայան

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի աշխատակազմի կրթության,
մշակույթի և սպորտի վարչության կրթության
բաժնի պետ.

Անդամներ՝

Հ. Հարությունյան

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի աշխատակազմի
ֆինանսական և սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության
ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ.

Ա. Առաքելյան

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի աշխատակազմի կրթության,
մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և
սպորտի բաժնի առաջատար մասնագետ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ